ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ

ԵՎ

ԲՐՈՆ ՔԱՂԱՔԻ

ՄԻՋԵՎ

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

2024-2026

Մեղրի քաղաքը՝ ի դեմս Մեղրիի քաղաքապետ՝ պարոն Խաչատուր Անդրեասյանի,

Բրոն քաղաքը՝ ի դեմս Բրոնի քաղաքապետ՝ պարոն Ժերեմի Բրեոյի,

Այսուհետ՝ Կողմեր,

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև առկա բարեկամության և համերաշխության կապերը,

Հաշվի առնելով մարդու իրավունքների հարգման, տղամարդկանց և կանանց միջև իրավահավասարության և աշխարհիկության ընդհանուր հանձնառությունը,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև կնքված համագործակցության պայմանագրերը, ինչպես նաև միմյանց Սահմանադրությունն ու օրենսդրությունը,

Ընդգրկվելով 2023 թվականի մարտի 29-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Օվերնյ-Ռոն-Ալպ շրջանի միջև համագործակցության համաձայնագրի, ինչպես նաև 2021թ.-ի դեկտեմբերի 9-ին ստորագրված «Ֆրանս-հայկական 2021-2026 թվականների տնտեսական ճանապարհային քարտեզի» ընդհանուր շրջանակներում,

Պայմանավորվեցին հետևյալի վերաբերյալ.

ՀՈԴՎԱԾ 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

Սույն համաձայնագրի առարկան, երկու համայքների միջև կայուն հարաբերություններ շարունակելով, ապակենտրոնացված համագործակցության գործողությունների զարգացման համար նպաստավոր շրջանակ երաշխավորելն է:

Սույն փոխանակումները, որոնք հիմնված են փոխադարձ շահի գաղափարի վրա, առաջնորդվում են բաց լինելու և փոխադարձ գիտելիքների վրա հիմնված միջազգային համերաշխության ոգով:

Կողմերը պարտավորվում են.

- ներգրավել իրենց բնակչությանը ընդհանուր շահերի համար,

- խթանել ժողովրդավարությունը գործողությունների կառուցման, համաֆինանսավորման, մոնիտորինգի և գնահատման գործում,

- զարգացնել փորձի, գիտելիքների և հմտությունների փոխանակում,

- արժևորել միմյանց կարողություններն ու առանձնահատկությունները:

ՀՈԴՎԱԾ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Օվերնյ-Ռոն-Ալպ շրջանի միջև կնքված համագործակցության համաձայնագրի նույն թեմայով դրույթներին համապատասխան՝ Կողմերը համաձայնեցին համագործակցության հետևյալ թեմատիկ առաջնահերթությունների շուրջ.

- Ֆրանկոֆոնիայի և ֆրանսերենի ուսուցման զարգացում և խթանում,

- Կրթության, մանկության և երիտասարդության ոլորտում փոխանակումներ, ներառյալ երիտասարդների մասնագիտական վերապատրաստումը,

- Տնտեսական զարգացում, մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտում,

- Կայուն զբոսաշրջության զարգացման շրջանակներում փոխանակումներ,

- Ինստիտուցիոնալ, միությունների միջև և մշակութային փոխանակումներ,

- Առողջապահության ոլորտում փոխանակումներ, ներառյալ՝ բուժման հասանելիության բարելավումը

և ցանկացած ոլորտ, որը հետագայում Կողմերը կցանկանան խթանել, և որը կհստակեցվի սույն համաձայնագրին կից առդիրով:

Անհրաժեշտության դեպքում, գործողությունների յուրաքանչյուր ոլորտի վերաբերյալ ներգրավված տարբեր գործընկերների միջև կկնքվի հատուկ համաձայնագիր:

ՀՈԴՎԱԾ 3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Սույն համագործակցության նպատակներին հասնելու համար և սույն համաձայնագրի շրջանակներում Կողմերը պարտավորվում են համատեղ և տևական գործողություններ իրականացնել 2-րդ հոդվածով սահմանված համագործակցության ոլորտներում:

Համագործակցության ծրագրերը կիրականացվեն հետևյալ եղանակներով.

• Պատվիրակությունների, փորձագետների և խաչաձև առաքելությունների փոխանակում

• Առևտրային տոնավաճառներին և տնտեսական այլ միջոցառումներին խաչաձև մասնակցություն

• Ուսանողների շարժունակության և փոխանակման ծրագրերի օգտագործում

• Սոցիալ-տնտեսական օպերատորների և քաղաքացիական հասարակության ներգրավում (միություններ, հասարակական և մասնագիտական կազմակերպություններ)

• Երկկողմ և բազմակողմ համագործակցության ծրագրերի ֆինանսական աջակցություն

ՀՈԴՎԱԾ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Փոխադարձ համաձայնությամբ ընտրված գործողությունների և նախագծերի իրականացման համար Կողմերը պարտավորվում են, ի լրումն սեփական ֆինանսավորման, ազգային և միջազգային դոնորներից, այդ թվում՝ Եվրոպական Միությունից, միասին փնտրել իրենց համագործակցության ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները:

ՀՈԴՎԱԾ 5. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Նախագծերի պատշաճ զարգացումն ապահովելու համար կձևավորվի համակարգող կոմիտե՝ սույն համաձայնագրով նախատեսված համագործակցության նպատակներին համապատասխան:

Կողմերը կարող են սահմանել գործողությունների ծրագիր, որը կդառնա սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կողմերը պարտավորվում են նպաստել իրենց գործողությունների իրականացմանը և ջանքեր գործադրել ֆինանսավորում ներգրավելու հարցում, իսկ միջոցներ ձեռք բերելու դեպքում՝ միմյանց տեղեկացնել:

Կողմերը միմյանց հասանելի կդարձնեն այդ ծրագրերին վերաբերող բոլոր փաստաթղթերը, որոնց մասին իրենք տեղյակ են, ինչպես նաև տեղական և ազգային պլանավորման փաստաթղթերը, որոնց շրջանակներում տեղի կունենան համագործակցության գործողությունները:

ՀՈԴՎԱԾ 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն համաձայնագիրը միջազգային պայմանագիր չէ և Կողմերի համար չի ստեղծում միջազգային հանրային իրավունքով կարգավորվող որևէ իրավունք և պարտավորություն:

2. Սույն համաձայնագիրը կնքվում է երկու տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի նույն ժամկետով, եթե Կողմերից մեկը մյուսին գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին համաձայնագրի ավարտից առնվազն վեց (6) ամիս առաջ:

3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ կմտնի Կողմերի կողմից ստորագրման պահից:

4. Սույն համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ կմտնեն սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով և կկազմեն սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

5. Սույն համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված ցանկացած վեճ կլուծվի բանակցությունների միջոցով:

Կատարված է Լիոն քաղաքում 2024 թվականի նոյեմբերի 21-ին, երկու բնօրինակով՝ հայերեն և ֆրանսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Մեղրիի քաղաքապետ	**Բրոնի քաղաքապետ**
Խաչատուր Անդրեասյան	Ժերեմի Բրեո

Համաձայնագիրը ստորագրվեց բարձր հովանու ներքո՝

Օվերնյ-Ռոն-Ալպ շրջանի հատուկ խորհրդական	**Սյունիքի մարզպետ**	**Օվերնյ-Ռոն-Ալպ շրջանի նախագահ**
Լորան Վոքիե	Ռոբերտ Ղուկասյան	Ֆաբրիս Պանկուք